№ 9 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 18

1895
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 18 № 9

«ՉԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՒԻՂ

«ՉԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւո՞ր է մեղմ լինել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկահայ կնոջ մօղան. Նամակ Սպանից. Նամակ Խոյից. Նամակ Դավրէժից. Տարբեր լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մաքսի Տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՖԷԼԻԵՏՕՆ.

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵՂՄ ԼԻՆԵԼ

I

«Պէտք չէ խիստ լինել. պէտք է երայնամիտ լինել և աչք խփել եղածների վրայ»—խորհուրդ են տալիս մեզ ոչ միայն այն մարդիկ, որոնք ոգէտ են և կամ սողունային ինստինկտների տէր, այլ և այն արարածները՝ որոնք օձային բնաւորութեամբ են հեկավարվում, որոնք երես առ երես պարզութեամբ և անկեղծութեամբ, անձն առնելով ամէն զրկանք, քաջութիւն չունին սևին սև և սպիտակին սպիտակ ասելու։

Ինչ որ կուզէք գոէք, ասում են մեզ, միայն թէ յարգանքով վերաբերեցէք դէպի այնպիսի աւանդութիւնները, որոնք նուիրագործուած են մեր ախնիքների նեղ պահանջներով և կամ որոնք կրում են իրենց վրայ դարերի ոջին, պապերի սահմանափակ մտքի դրոշմը։

Եթէ տեսնում էք կեղտոտութիւն, տգիտութիւն և այդ տեսակ յատկութիւնները—խորհուրդ են տալիս մեզ «խոհեմ» մարդիկ—մի ասէք նրանց իսկական յատկութիւնը, այլ անցէք և թողէք որ կեղտից կեղտ գոյանայ և կեղտը ոչնչացնէ։ Յետոյ, այդ բարի խորհուրդի վրայ աւելացնում են. «աշխատեցէք թշնամիներ քիչ ունենալ»։

«Այդ ինչ սանձարձակ լեզուով էք խօսում հայ կղերի և այլ հազար ու մէկ այդպիսի «նուիրական» հաստատութիւնների վրայ,—գոչում են մեզ,—զսպեցէք ձեր լեզուն. որի դէմ որ ուզում էք խօսել—ազատ էք, միայն թէ մի դիպչէք այդ դասակարգին։ Մի քանիսները աւելի «ազատամիտ» գտնուելով, դիտել են տալիս որ՝ Ազատ ենք հայ կղերի վարքն ու գործունէութիւնը քննադատել, ինչ կրօնապետինը երբէք, ոչ մի դէպքում։

Մնում է այժմ մի չորրորդ խորհուրդ ևս, որի չը գործադրելուց ի վեր մենք ենթարկվում ենք ամեն տեսակ հալածանքների։ Մեզ խորհուրդ են տալիս չը դպչիլ աղաների և վսեմաշուքների, մանաւանդ հարուստների և ազդեցիկ ազգայինների ջղերին, որովհետև այդ մեծապատիւները շատ դիւրագրգիռ են և կարող են մեր աջքի համար, իրենց ձեռքն եղած բոլոր ազգային գործերը տակն ու վրայ անել։

Այս բոլոր խորհուրդները բղխում են մի ընդհանուր աղբիւրից։ Մեզ խոհեմութիւն, մեղմութիւն և լռութիւն են դաս տալիս, որովհետև մեր երևան հանած ճշմարտութիւնները կուրացնում են շատերի։ Բայց ինչ է մամուլի կոչումը. շոյել ուժեղների, ճզմել թոյլերի—թէ պաշտպան կանգնել զրկուողների և հարստահարուողներին։ Ի՞նչ է նորա գործը. ծառայել մասնաւոր դծուծ շահերի, թէ ընդհանրութեան շահերի կողմը լինելով, նպաստել ոչնչացնելու այն ամենը՝ ինչ որ ճզմում է ժողովրդին, ուռճացնում է մասնաւոր անձերի կամ դասակարգերի։ Ո՞րն է մի թերթի կոչումը. ծածկել կեղտերը և թոյլ տալ որ նրանք մաշեն և ոչնչացնեն ամեն օրգանիզմ, թէ անխնայ մաքրել նրանց, ոչնչացնել նրանց գոյացնող միկրոպներին և միմիայն մաքրութեանը նպաստել։

Ուրեմն մամուլը կոչուած չէ ստութիւնների շոյելու և ժողովրդի արիւն ծծողներին պաշտպանելու համար. այդ տեսակ թերթերը արժանի են լինում ամենակծու արհամարհանքի միայն, իսկ իր կոչումն հասկացող մամուլը պարտաւոր է մերկացնել ճշմարտութիւնը, որքան որ նա շլացուցիչ լինէր, որքան որ նա սկզբում դառնութիւն արտադրէր։ Ամեն ինչ այդպէս է, ամեն նժդար որ կոխվում է վերքի մէջ, սկզբում խիստ ցաւ է պատճառում և բժիշկը ի նկատի ունենալով այդ, ոչ թէ զգուշանում է նժդարը կոխելուց, այլ շտապում է վերքը կտրել ոչնչացնել, ապագայ փթումների առաջն առնելու համար։ Խոհեմութիւն—վերքը պարզելու մէջ—հասկանալի չէ. զգուշանալ ասելու որ 2 անգամ 2 անում է չորս—դա միայն կարող են անել 4-ից մնացուող արարածները. իսկ մենք, որ աքսիոմաների մերկութիւնը գտնում ենք որպէս միակ միջոց մի հասարակութեան առաջադիմութեան համար, ոչ մի բոպէ նրան ծածկել մտադիր չենք, ոչ մի իսկ վարկեան։

Ներել մի մանուկի որ սխալվում է, կարելի է. երկայնամիտ լինել և աշխատել մեղմութեամբ ուղղել նրան—դա մի մանկավարժական պայման է. բայց այդ կերպով վարուել մի հասարակական գործիչի հետ որ կեղեքում է, հարստահարում և կամ որը սխալ սխալի ետևից գործելով խաւար է սփռում իր ձեռքն ընկած հաստատութիւնների վրայ, թոյլ տալ որ ամեն տեսակ մեծապատիւ գայլ օգտուելու ժողովրդի միամտութիւնից և լիմարացնի նրան, թոյլ տալ որ քրիստոնէական կրօնի անունով կռապաշտութիւն սփռէ նա և այդ բանի դէմ խօսողներին անաստուած տիտղոսով հալածէ, թոյլ տալ որ անբարոյական անձերը բարոյականութեան անունով, նրա սկզբունքները իրենց շահերի համաձայն կռելով՝ ապականեն հասարակութիւններ և վերջապէս թոյլ տալ որ զանազան ապիկարներ, զանազան դպիրներ ու փարեսիցիներ, մի մի պաշտօնական հագուստի մէջ պարուրուած՝ գնան նստեն Մովսէսի աթոռը... դա մի աններելի յանցանք կը լինէր մամուլի կողմից, դա կը լիներ շանտաժիստութիւնից

ՖԵԼԻԵՏՕՆ

բարեկամ Վինդ-Վանդ չինացին.—Աքլորները և սագերը դժգոհ են մեր թերթի ուղղութիւնից.—Վինդ-Վանդ բարեկամիս բացատրութիւնը այդ մասին.—Գայլերն էլ են մեզ հնամի.—«Կամաց-կամաց» թէ միանգամից.—Երաժշտասիրաց ընկերութեան տնօրինի ապօֆէօզը։

—

Չին-ժապոնական պատերազմը բորբոքման մէջ էր երբ ես «Ճաւղի» կողմից որպէս թղթակից ամսական 3333 թուման ռոճիկով ճապարհ ընկայ դէպի Չինաստան՝ մօտից հետևելու պատերազմի ընթացքին։ Այդ ճանապարհորդութեան ժամանակ ես գտայ մի քանի չինացի բարեկամներ, որոնցից մէկի բարեկամութիւնը նամանաւանդ ամենից բարձր գնահատում. դա է Վինդ-Վանդ փիլիսոփան, որ թէև եւրոպական համալսարան չէ աւարտել, բայց բաւական լաւ ծանօթ է կեանքի փիլիսոփայութեան և հասկանում է բոլոր կենդանիների լեզուն։ Ես յաճախ դիմում էի նրան խորհուրդ կամ բացատրութիւն խնդրելով այս կամ այն խնդրի մասին և նա ուախութեամբ կատարում է խնդիրս։

* * *

Այսպէս օրինակ մօտ ժամանակներս դիմում են խմբագրութեան մի խումբ աքլորներ և սագեր յայտնում են, որ իրենք սաստիկ գրգռուած են մեր թերթի բռնած ուղղութեամբ որ չեն համակրում և չեն ետաքրքրվում մեր թերթով և ցաւում են, որ սա չի բռնել իրենց ցանկացած ուղղութիւնը։

Ես անկարող եմ լինում իմանալ թէ ինչու նրանք խրտնում են մեր ուղղութիւնից, ինչն է իրանց ցանկացած ուղղութիւնը, ինչու են առհասարակ գրգռուել մեր դէմ։ Ես զգում եմ Վինդ-Վանդ չինացի բարեկամիս օգնութեան կարօտութիւնը, որովհետև նա աւելի լաւ է հասկանում կենդանիների լեզուն և դիմում եմ նրան։

* * *

«Սիրելի բարեկամ, գրում է ինձ Վինդ-Վանդը։ Ես բոլորովին չեմ զարմանում, որ աքլորները ու սագերը ձեր թերթին չեն համակրում. ես ծանօթ եմ նրանց բնաւորութեան և օրէնքներին և գիտեմ թէ ինչ է հարկաւոր նրանց համակրելի դառնալու համար. ահա այդ պայմաններից գլխաւորները.

1) Չը պէտք է խօսել կամ եթէ խօսել՝ ոչ համարձակ։

2) Սեփական կարծիք չը պէտք է ունենալ. նամանաւանդ իրենից մեծի և ուժեղի առաջ համարձակ կարծիք չը պէտք է յայտնել. այլ պիտի համաձայնել անպայման կերպով նրա կարծիքի հետ։

3) Երբ տեսնում ես որ մի տեղ բոլորը կոյր են դու էլ պիտի կուրանաս կամ գոնէ քեզ կոյր ձևացնես։

4) Չը պիտի պատիւը շոայլես անարժանների համար, այսինքն նրանց, որոնցից շահ չես կարող ունենալ. այլ պիտի պատիւը տաս արժանաւորներին, իսկ արժանաւորութիւնը պիտի չափես դիրքի բարձրութեամբ և միրուքիևհագուստի երկայնութեամբ և քսակի առողջութեամբ։

5) Ինչ որ մտնում է ստամքդը նա սուրբ է, առանց նայելու թէ նա ինչպէս է գտնուած. աղբանոցը քրքրելիս, ախոռում քշուշ անելիս, թէ տղմերի մէջ պարտելիս։ Ով ձեզ դէպի այդ վայրերը «կո՛ւտ, կո՛ւտ, կո՛ւտ» արեց, իմացէք որ նա ձեր բարեկամն է, իսկ ով «քը՛շ, քը՛շ, քը՛շ»՝ նա ձեր թշնամին։

Այդքանը բաւական եմ համարում, որովհետև մնացածները դու ինքդ էլ կարող ես շարունակել։ Այժմ քեզ հասկանալի կը լինի թէ ինչու յիշեալ պատգամները դաւանող որոշ դասակարգը չէ համակրում ձեր թերթին, որովհետև սրա ուղղութիւնը բոլորովին հակառակ է նրանց դաւանութիւններին։ Ես կարծում եմ, որ ոչ միայն սագերը, բադերը և աքլորները, այլ և գիշերային թռչունները, ինչպէս և գայլերն, աղուէսներն և դրանց բարեկամներն էլ պէտք է ձեզ հետ թշնամի լինին։

Վինդ-Վանդ

* * *

Իմ բարեկամ Վինդ-Վանդի դուշակութիւնը, ասած իմ գաւառացի պաշտօնակից Ֆարրուխի, «կանանչան». բանից դուրս եկաւ, որ աղուէսներն ու գայլերն էլ են մեզնից խռովել։ Մօտիկ օրերս ստանում ենք Սալմաստից «Ճաւղի» մի համար խզբզած, լուսանցքները լցրած հայհոյանքներով և վրան «Ճաւիղ» վերատառութեան տեղ գրած «Խաւար»։ Գողը սիրում է մութ գիշեր. ովքեր են սիրում խաւարը եթէ ոչ գիշերային թռչունները և գայլերը։ Նրանք կատաղել են իմ գաւառացի պաշտօնակից Ֆարրուխի դէմ, որը սիրուն կերպով դուրս է բերել նրանց խաւարային պատկերը։ Նրանք սպառնացել են սպանել գրողին, եթէ դտնեն

աւելի ստոր յատկութիւն մի թերթի համար, որ ծառայում է ոչ թէ դասակարգերի, այլ հասարակութեան. ոչ թէ մասնաւոր անձերի, այլ ժողովրդի շահերին և որը՝ նոյն իսկ ելթէ փողոքիչը սկզբում յաւէտ ազատախնայր բարոյ տեսնելով որ իր վրայ տարածած կեղտը քերում են – պարտաւոր է վերականգնել ճշմարտութեան դրոշը և անխնայ կերպով արօրել ու հորատել ամեն ստութիւն, ստորութիւն, ամեն հարստահարական ջանք և ամեն թշուառի արիւնով սնանող և նրա միջոց խաւարի մէջ կուրացնող դասակարգերին...

Վ.Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԿՆՈՋ ՄՕԴԱՆ

«Շաւղի» առաջին համարում «Մեծ ակնարկ» արտատպած վրայի կնոջ մի քանի նորագրածը պատճառ դարձաւ մեզ կրկնակի գրելու:

Մի օր բարեկամիս տունը գնալուիս՝ տեսայ որ նա իւր դեռատի ամուսնու հետ նստած, «Շաւղի» առաջին համարը ձեռքում, տաք խօսակցութեան մէջ են երկուսն էլ. խօսակցութեան պատճառը նոյն իսկ վրայի կնոջ գրածն էր: Բարեկամս կամենում էր այդ տողերը կարդացնել տալ բարեկամուհուս, որպէս զի դրանով հասկացնէր իւր ամուսնուն որ կանայք էլ ազատամտութեան և կրթութեան ասպարէզ են մանում և թէ իրեն էլ հարկաւոր է այդպէս լինել. իսկ կինը ընդդիմանալով, չէր կամենում կարդալ թերթը: Վերջապէս երկուսս միասին կարողացանք համոզացնել կարդալու:

Նախ թերթը ձեռքն առաւ և սկսեց մտքում կարդալ. վերջացնելուց յետոյ խնդրեցինք որ բարձր կարդայ և բացատրէ գրածը. թէպետ և շատ դժուարացաւ, բայց և այնպէս սկսեց կարդալ: Մինչև երեք տող կարդաց, թեր-

նրան: Խեղճերը տնքալով էլ չեն ուզում հանգիստ, որ մէկ ֆաղբեանի անէ կարող է վարը քանը զուրս գալ: Ճշմարտութեան և արդարութեան դէմ կարող էք յանդգնել գործելու, բայց լռեցնել նրանց ձայնը չէք կարող:

* * *

Այժմ կարծեմ հասկանալի կը լինի քեզ ընթերցող, թէ ինչու այդ մարդիկ մեզ անիծում են հարատում, երբ մենք անխնայ հրատարակում ենք ամեն տեսակ կեղտաութիւն:

—Ինչպէս կը հրամայէիք վարուել, հարցնում եմ. արդեօք լռել, երբ տեսնում ենք կեղտաութիւն, ստորութիւն, յափշտակութիւն: Խոնարհուիլ նրանց առաջ:

—Ո՛չ. կուզէիք նրանց դէմ. մենք շնորհաց կալ ենք ձեզնից, որ դուք բաւական ցանկութիւն ունիք մաքրել մեզ մեր կեղտկնից անխնայ մատնացոյց անելով նրանց, բայց դեռ ևս խնամ լինել, շատ զգուշութեամբ և ազնիւ թեամբ պէտք է անէք այդ: Չի բաւէր է շատ պել, այլ գործել կամաց-կամաց:

—Օհ, խորամանկնա, ես ձեզ հասկանում եմ: Ես գիտեմ թէ ինչ է նշանակում այդ «կամաց-կամաց»: Եմ բարեկամ Վենդ-Վանդ չինացին ասա թէ ինչ առակ է պատմում 13 բոպէ տևեց և երեք անգամ էլ դէմքի գոյնը փոփոխեց զանազան գոյների. այսպիսի մի ընթերցումից յետոյ աւելորդ համարեցինք բացատրութիւնը, այլ հետևեալ հարցը տուի, «Տիկին, մի՞թէ դուք միշտ ընթերցանութեամբ չէք պարապվում. դուք երբեմն նոր դրոյթ բացատրա... Ես ձեզ վերայուրիշ տեսակ էր նայում»:

Իսկ բարեկամս ասաց. «Եւ որովհետև մեր տան միշտ գտնվում են գրքեր, թերթեր, ես այնպէս էի կարծում, որ սա (ցոյց տալով կնոջը) իւր պարապ ժամերը ընթերցանութեամբ է անցկացնում, բայց այժմ բանից դուրս է գալիս, որ մեր ամուսնութիւնից մինչև ցարդ գրքի թերթի երես տեսած չէ»:

Բանից յետոյ էլի մի քանի երեկոյ ստիպ ունեցայ բարեկամիս մօտ գնալու, բայց այդ անգամ թերթ կամ գիրք չտեսայ, այլ խաղաթղթեր երկու ամուսինների առջև: Վերջին անգամս այնտեղ գտայ և մէկ ուրիշ հիւր, որ բարեկամին հետ խաղաթղթերով էին զբաղուած. վենտ էլ պարապ չթողնելու համար հիւրը առաջարկեց մի նոր ձևի խաղ տրով կարելի կլիներ երեքով միասին վարել և սկսեց ձեռները սովրեցնել. այդ բոպէին տիկինը, որ օրորոցի մօտ նստած փոքր մանկան կաթ էր տալիս, նոր խաղի անունը լսելուն պէս՝ զմայլած կերպով մօտեցաւ մեզ և գոչեց. «ներեցէք, պարոն, կարելի է ինձ ևս ցոյց տաք ձեր նոր տեսակ խաղի ձևերը»: Իսկ ես զարմանալով պատասխանեցի. տեսնում էք, տիկին, այն գիշեր մենք սրբոն էլ առաջարկում էինք ձեզ կարդալ տիկնոջ դրածը՝ դուք դժուարանում էիք. բայց այժմ զմայլած նոր խաղի երևան լսելով էք ցոյց տալ ձեզ ձևերը:

«Ինչ պարոն՝ պատասխանեց տիկինը. «ձեր գտնվելութեան մէջ ամօթա» է դարձել թերթերը և թէ ինձանից դէպքում հարկաւորվում է մեզ մէկդ էլ պար-

այդ մասին:

«Կար հրեան մի մարդ որ ամեն ջղա-նում էր իր հարևանի հաւերից. նրա յարեկամները՝ մէկը նկատելով այդ դէպքը. «ինչ սը ես պրում ես վարդ չէ ամիս մարդ և ուրախանում հաղորդել նրանց»

—Ինչ ասես պատասխանեց հրեան ինքն էլ չուս ցանկանում համոզել, միայն «կամաց-կամաց». այսինքն՝ «ամեն փոքր հրկու օրը մի հաւ, յետոյ տասը մէկը, յետոյ տասին մէկը ամենը ոչ որ ոչ մի հաւ կամ ամենը»

—Բայց ինչ որ մինչև այն ժամանակ հաւերը ես վերջացած կը լինիք, ասաց բարեկամը դառն ծիծաղով և հեռացաւ»:

Այժմ մենք մեզ ոտքը դեմ է գործնական մարդ ինչպէս ձեզնում «կամաց-կամաց» ծիծաղելի, համարվում է վասնզաւոր մարդ, որ դիտոր է խոսուիր ամեն ինչ մինչև սոսկալի դարձ ունիք դնել եթէ նոյն իսկ նրանք քարեկամներ լինեն:

* * *

Ես ինչ հրաշալի ապա որ չեն կատարվում մեր մէջ «կամաց-կամաց». այ օրինակ մասնաւորապես մարդիկ «մի քանի փայտի հարուածներ» տաւոր ենք մոռալին հետևելու. իսկ ընթերցանութիւնը...»

Այդ էլ ձեզ-պարսկահայ կնոջ մօդան:

Բ. Տէր Սարգսեանց

Դավրէժ

ՆԱՄԱԿ ՍՊԱՀԱՆԻՑ

Նոր-Զուղա 4 մարտ 95

Սահակ վարդապետ Այվազեանը փետր. 23-ին մեկնեցաւ Երթալու Թէհրան: Երթալու լուրը երբ տարածուեց, տեղւոյս նշանաւոր անձնաւորութիւններից մօտ 40 հոգիների ստորագրութեամբ մի գրութիւն ուղղուեց վարդապետին՝ խընդրելու համար իմանալ նրա Թէհրան գընալու նպատակը, քանի որ նա, ըստ Կաթուղիկոսական հրամանի, պարտաւոր էր մնալ Սպահանում, իբր տեղապահ Հնդկաստան գնացող Եսայի սրբազանի: Այդ գրութեան պատճէնը ուղարկում ենք ձեզ, այնտեղ դուք կը տեսնէք Կաթուղիկոսական հրամանի խօսքերը, որոնք երբէք իրաւունք չեն տալիս տեղապահին գնալ նստելու Թէհրան և Սպահանից հեռու մնալու այնպիսի ժամանակ երբ առաջնորդը մեկնում էր Հնդկաստան:

Ստորագրողները, լիրաւի, սպասում էին մի գոհացուցիչ պատասխանի, բայց յուսախաբուեցին: Լսում ենք որ վարդապետը ծիծաղել է այդ պահանջի վրայ և բերանացի անգամ չէ պատասխանել: Թէև սրբազանը, երբ բարեկենդանի սեղանի վրայ կենաց էր խմում, ասաց որ վարդապետը Թէհրան էր գնալու «ազգային թեմական գործերը կարգադրելու համար», բայց մենք լսում ենք որ Այվազեանը մտադիր է իր բնակութիւնը հաստատել և մնալ Թէհրանում: Երէկ էլ Եսայի եպիսկոպոսը մեկնեցաւ դէպի Հնդկաստան. թվ Է ուրեմն նրա տեղակալը նրա երկու-երեք տարեայ բացակայութեան միջոցում: Թվ պիտի լինի այս բազմահայ քաղաքի և նրան շրջապատող հայ գիւղերի ազգային գործերի ղեկավարը կամ պարսից կառավարութիւնը զոհ պիտի ճանաչէ Զուղայի և գաւառների հայ հասարակութեան ներկայացուցիչ և ազգապետ: Ոմանք կասկածում թէ խորհրդարան կայ. ինչ նշանակութիւն ունի մի խորհուրդ, որի ատենապետն է գիւղացի մի անտաշ քահանայ և սրբազանի վերջերումս ձեռնադրած նոյն տեսակ մի քանի քահանաներ՝ անդամներ:

Այսպէս ուրեմն, վերջին 3—4 տարիներում Պարսկա-Հնդկաստանի լայնածաւալ մեծ թեմերն, նոյնպէս և աթոռանիստ Սպահանը խաղալիք է դարձել անժողովրդական հայ կղերի եսականութեան և հաճոյքներին:

Տարօրինակ է որ Այվազեան վարդապետը, հակառակ կաթուղիկոսական հրամանի, հեռանում է իր պաշտօնատեղից ընդ միշտ, և թողնելով բազմահայ Սպահանը, ուր աւելի պէտք կայ մի առաջնորդի, գնում է նստել Թէհրանի պէս միայն մի քանի հարիւր հայ ունեցող քաղաքում:

Մենք մեր բողոքի օրինակը յղել ենք արդէն Վեհ. Կաթուղիկոսին և այժմ էլ ահա, հրապարակապէս բողոքում ենք քմահաճոյական ընթացքների դէմ, որոնք բռնել են Եսայի սրբազանը և վարդապետ Այվազեանը:

Մեր քաղաքում, շրջակայ հայ գիւղերում ամեն ինչ տակն ու վրայ թողած, տիրող խաւարին ոչ մի նշանախեցով անգամ վնաս չը հասցրած, այդ կրօնաւորները թողին հեռացան ոչինչ օգուտ չը տալով մեզ, բացի միայն անլուծելի խնդիրները աւելի բարդելուց և եղածներն էլ աւելի անլուծելի դրութեան մէջ ձգելուց: Ի՞նչով են մեղաւոր դուրեմն պարսկահայերը, որ էջմիածնից մեզ ուղարկում են կամ անգործութեամբ մեզ վնասող և կամ իրենց վնասակար ընթացքներով մեզ թշուառութեան մէջ ձգող կրօնաւորներ:

բարձը աշտարակ. եղաժշտական խումբը ՀԸ նուագի «կապայա երկնքում», —ոչ յետոյ իրենց պնօրէնին կը ճնեն շեփորների վրայ և կը բարձրացնեն աշտարակի ծայրը. այդ բոպէին քարտուղարը ծնկաչոք կը մատուցանի նրան իր՝ «Արձագանքում» մնալած նամակը ոսկեզօծ շրջանակի մէջ. նոյն միջոցին բոլոր խումբը ծնկաչոք կը յայտնի իր երախտագիտական զգացմունքները, իսկ «սրանչելի անկեղծութեան» տէր տնօրէնը այնչափ կը զգածի և նրա աչքերից շնորհակալութեան արտաքսունքը այնպէս առատութեամբ կսկսի հոսել, որ բոլոր խմբի թաշկինակները նրա արտասունքները ցամաքեցնելու համար չը բաւականանալով՝ քիմի վարագոյրը կը գործածեն. իսկ տնօրէնը կարտասանի այս խորհրդաւոր և սրտառուչ խօսքերը. «Եթէ ազգը ինձանից ձեռք վեր պահի, ես ձեռք չեմ վեր առնի նրանից:» Իսկ իմ պաշտօնակից Փարրուխը, որ այդ բոպէին յանկարծ կը յայտնի այդտեղ՝ կը պատասխանի.

«Ի՞նչ տեղը զիդիրես»:

Նիշ.

(Ազգ. Վարք)

մաւոր ենք մօդային հետևելու. իսկ ընթերցանութիւնը...»

Այդ էլ ձեզ-պարսկահայ կնոջ մօդան:

Բ. Տէր Սարգսեանց

Դավրէժ

ՆԱՄԱԿ ՍՊԱՀԱՆԻՑ

Նոր-Զուղա 4 մարտ 95

Սահակ վարդապետ Այվազեանը փետր. 23-ին մեկնեցաւ Երթալու Թէհրան: Երթալու լուրը երբ տարածուեց, տեղւոյս նշանաւոր անձնաւորութիւններից մօտ 40 հոգիների ստորագրութեամբ մի գրութիւն ուղղուեց վարդապետին՝ խընդրելու համար իմանալ նրա Թէհրան գընալու նպատակը, քանի որ նա, ըստ Կաթուղիկոսական հրամանի, պարտաւոր էր մնալ Սպահանում, իբր տեղապահ Հնդկաստան գնացող Եսայի սրբազանի: Այդ գրութեան պատճէնը ուղարկում ենք ձեզ, այնտեղ դուք կը տեսնէք Կաթուղիկոսական հրամանի խօսքերը, որոնք երբէք իրաւունք չեն տալիս տեղապահին գնալ նստելու Թէհրան և Սպահանից հեռու մնալու այնպիսի ժամանակ երբ առաջնորդը մեկնում էր Հնդկաստան:

Ստորագրողները, լիրաւի, սպասում էին մի գոհացուցիչ պատասխանի, բայց յուսախաբուեցին: Լսում ենք որ վարդապետը ծիծաղել է այդ պահանջի վրայ և բերանացի անգամ չէ պատասխանել: Թէև սրբազանը, երբ բարեկենդանի սեղանի վրայ կենաց էր խմում, ասաց որ վարդապետը Թէհրան էր գնալու «ազգային թեմական գործերը կարգադրելու համար», բայց մենք լսում ենք որ Այվազեանը մտադիր է իր բնակութիւնը հաստատել և մնալ Թէհրանում: Երէկ էլ Եսայի եպիսկոպոսը մեկնեցաւ դէպի Հնդկաստան. թվ Է ուրեմն նրա տեղակալը նրա երկու-երեք տարեայ բացակայութեան միջոցում: Թվ պիտի լինի այս բազմահայ քաղաքի և նրան շրջապատող հայ գիւղերի ազգային գործերի ղեկավարը կամ պարսից կառավարութիւնը զոհ պիտի ճանաչէ Զուղայի և գաւառների հայ հասարակութեան ներկայացուցիչ և ազգապետ: Ոմանք կասկածում թէ խորհրդարան կայ. ինչ նշանակութիւն ունի մի խորհուրդ, որի ատենապետն է գիւղացի մի անտաշ քահանայ և սրբազանի վերջերումս ձեռնադրած նոյն տեսակ մի քանի քահանաներ՝ անդամներ:

Այսպէս ուրեմն, վերջին 3—4 տարիներում Պարսկա-Հնդկաստանի լայնածաւալ մեծ թեմերն, նոյնպէս և աթոռանիստ Սպահանը խաղալիք է դարձել անժողովրդական հայ կղերի եսականութեան և հաճոյքներին:

Տարօրինակ է որ Այվազեան վարդապետը, հակառակ կաթուղիկոսական հրամանի, հեռանում է իր պաշտօնատեղից ընդ միշտ, և թողնելով բազմահայ Սպահանը, ուր աւելի պէտք կայ մի առաջնորդի, գնում է նստել Թէհրանի պէս միայն մի քանի հարիւր հայ ունեցող քաղաքում:

Մենք մեր բողոքի օրինակը յղել ենք արդէն Վեհ. Կաթուղիկոսին և այժմ էլ ահա, հրապարակապէս բողոքում ենք քմահաճոյական ընթացքների դէմ, որոնք բռնել են Եսայի սրբազանը և վարդապետ Այվազեանը:

Մեր քաղաքում, շրջակայ հայ գիւղերում ամեն ինչ տակն ու վրայ թողած, տիրող խաւարին ոչ մի նշանախեցով անգամ վնաս չը հասցրած, այդ կրօնաւորները թողին հեռացան ոչինչ օգուտ չը տալով մեզ, բացի միայն անլուծելի խնդիրները աւելի բարդելուց և եղածներն էլ աւելի անլուծելի դրութեան մէջ ձգելուց: Ի՞նչով են մեղաւոր դուրեմն պարսկահայերը, որ էջմիածնից մեզ ուղարկում են կամ անգործութեամբ մեզ վնասող և կամ իրենց վնասակար ընթացքներով մեզ թշուառութեան մէջ ձգող կրօնաւորներ:

նամ: Խեղճերը տնքալով էլ չեն ուզում հանգիստ, որ մէկ ֆաղբեանի անէ կարող է վարը քանը զուրս գալ: Ճշմարտութեան և արդարութեան դէմ կարող էք յանդգնել գործելու, բայց լռեցնել նրանց ձայնը չէք կարող:

* * *

Այժմ կարծեմ հասկանալի կը լինի քեզ ընթերցող, թէ ինչու այդ մարդիկ մեզ անիծում են հարատում, երբ մենք անխնայ հրատարակում ենք ամեն տեսակ կեղտաութիւն:

—Ինչպէս կը հրամայէիք վարուել, հարցնում եմ. արդեօք լռել, երբ տեսնում ենք կեղտաութիւն, ստորութիւն, յափշտակութիւն: Խոնարհուիլ նրանց առաջ:

—Ո՛չ. կուզէիք նրանց դէմ. մենք շնորհաց կալ ենք ձեզնից, որ դուք բաւական ցանկութիւն ունիք մաքրել մեզ մեր կեղտկնից անխնայ մատնացոյց անելով նրանց, բայց դեռ ևս խնամ լինել, շատ զգուշութեամբ և ազնիւ թեամբ պէտք է անէք այդ: Չի բաւէր է շատ պել, այլ գործել կամաց-կամաց:

—Օհ, խորամանկնա, ես ձեզ հասկանում եմ: Ես գիտեմ թէ ինչ է նշանակում այդ «կամաց-կամաց»: Եմ բարեկամ Վենդ-Վանդ չինացին ասա թէ ինչ առակ է պատմում

«Կար հրեան մի մարդ որ ամեն ջղա-նում էր իր հարևանի հաւերից. նրա յարեկամները՝ մէկը նկատելով այդ դէպքը. «ինչ սը ես պրում ես վարդ չէ ամիս մարդ և ուրախանում հաղորդել նրանց»

—Բայց ինչ պատասխանեց հրեան ինքն էլ չուս ցանկանում համոզել, միայն «կամաց-կամաց». այսինքն՝ «ամեն փոքր հրկու օրը մի հաւ, յետոյ տասը մէկը, յետոյ տասին մէկը ամենը ոչ որ ոչ մի հաւ կամ ամենը»

—Բայց ինչ որ մինչև այն ժամանակ հաւերը ես վերջացած կը լինիք, ասաց բարեկամը դառն ծիծաղով և հեռացաւ»:

Այժմ մենք մեզ ոտքը դեմ է գործնական մարդ ինչպէս ձեզնում «կամաց-կամաց» ծիծաղելի, համարվում է վասնզաւոր մարդ, որ դիտոր է խոսուիր ամեն ինչ մինչև սոսկալի դարձ ունիք դնել եթէ նոյն իսկ նրանք բարեկամներ լինեն:

* * *

Ես ինչ հրաշալի ապա որ չեն կատարվում մեր մէջ «կամաց-կամաց». այ օրինակ մասնաւորապես մարդիկ «մի քանի փայտի հարուածներ» տաւոր ենք մոռալին հետևելու. իսկ ընթերցանութիւնը...»

Այդ էլ ձեզ-պարսկահայ կնոջ մօդան:

Բ. Տէր Սարգսեանց

Դավրէժ

ՆԱՄԱԿ ՍՊԱՀԱՆԻՑ

Նոր-Զուղա 4 մարտ 95

Սահակ վարդապետ Այվազեանը փետր. 23-ին մեկնեցաւ Երթալու Թէհրան: Երթալու լուրը երբ տարածուեց, տեղւոյս նշանաւոր անձնաւորութիւններից մօտ 40 հոգիների ստորագրութեամբ մի գրութիւն ուղղուեց վարդապետին՝ խընդրելու համար իմանալ նրա Թէհրան գընալու նպատակը, քանի որ նա, ըստ Կաթուղիկոսական հրամանի, պարտաւոր էր մնալ Սպահանում, իբր տեղապահ Հնդկաստան գնացող Եսայի սրբազանի: Այդ գրութեան պատճէնը ուղարկում ենք ձեզ, այնտեղ դուք կը տեսնէք Կաթուղիկոսական հրամանի խօսքերը, որոնք երբէք իրաւունք չեն տալիս տեղապահին գնալ նստելու Թէհրան և Սպահանից հեռու մնալու այնպիսի ժամանակ երբ առաջնորդը մեկնում էր Հնդկաստան:

Ստորագրողները, լիրաւի, սպասում էին մի գոհացուցիչ պատասխանի, բայց յուսախաբուեցին: Լսում ենք որ վարդապետը ծիծաղել է այդ պահանջի վրայ և բերանացի անգամ չէ պատասխանել: Թէև սրբազանը, երբ բարեկենդանի սեղանի վրայ կենաց էր խմում, ասաց որ վարդապետը Թէհրան էր գնալու «ազգային թեմական գործերը կարգադրելու համար», բայց մենք լսում ենք որ Այվազեանը մտադիր է իր բնակութիւնը հաստատել և մնալ Թէհրանում: Երէկ էլ Եսայի եպիսկոպոսը մեկնեցաւ դէպի Հնդկաստան. թվ Է ուրեմն նրա տեղակալը նրա երկու-երեք տարեայ բացակայութեան միջոցում: Թվ պիտի լինի այս բազմահայ քաղաքի և նրան շրջապատող հայ գիւղերի ազգային գործերի ղեկավարը կամ պարսից կառավարութիւնը զոհ պիտի ճանաչէ Զուղայի և գաւառների հայ հասարակութեան ներկայացուցիչ և ազգապետ: Ոմանք կասկածում թէ խորհրդարան կայ. ինչ նշանակութիւն ունի մի խորհուրդ, որի ատենապետն է գիւղացի մի անտաշ քահանայ և սրբազանի վերջերումս ձեռնադրած նոյն տեսակ մի քանի քահանաներ՝ անդամներ:

Այսպէս ուրեմն, վերջին 3—4 տարիներում Պարսկա-Հնդկաստանի լայնածաւալ մեծ թեմերն, նոյնպէս և աթոռանիստ Սպահանը խաղալիք է դարձել անժողովրդական հայ կղերի եսականութեան և հաճոյքներին:

Տարօրինակ է որ Այվազեան վարդապետը, հակառակ կաթուղիկոսական հրամանի, հեռանում է իր պաշտօնատեղից ընդ միշտ, և թողնելով բազմահայ Սպահանը, ուր աւելի պէտք կայ մի առաջնորդի, գնում է նստել Թէհրանի պէս միայն մի քանի հարիւր հայ ունեցող քաղաքում:

Մենք մեր բողոքի օրինակը յղել ենք արդէն Վեհ. Կաթուղիկոսին և այժմ էլ ահա, հրապարակապէս բողոքում ենք քմահաճոյական ընթացքների դէմ, որոնք բռնել են Եսայի սրբազանը և վարդապետ Այվազեանը:

Մեր քաղաքում, շրջակայ հայ գիւղերում ամեն ինչ տակն ու վրայ թողած, տիրող խաւարին ոչ մի նշանախեցով անգամ վնաս չը հասցրած, այդ կրօնաւորները թողին հեռացան ոչինչ օգուտ չը տալով մեզ, բացի միայն անլուծելի խնդիրները աւելի բարդելուց և եղածներն էլ աւելի անլուծելի դրութեան մէջ ձգելուց: Ի՞նչով են մեղաւոր դուրեմն պարսկահայերը, որ էջմիածնից մեզ ուղարկում են կամ անգործութեամբ մեզ վնասող և կամ իրենց վնասակար ընթացքներով մեզ թշուառութեան մէջ ձգող կրօնաւորներ:

Բողոքում ենք Վեհ. Կաթողիկոսին իր դէպի մեզ ուղարկած և իր Հրամաններն անգամ արհամարհող՝ հոգևորականների դէմ։

Եթէ սխալ ենք, եթէ Այվազեանն և Եսայի սրբազանը մեզ հետ այդպէս վարւելու՝ մեր ազգային գործերը այդպէս անտէր թողնելու հրաման ունէին Էջմիածնից, պարտաւոր էին մեզ իմաց տալ գոնէ այդ մասին։

Ս. Ա. Մ.

ՆԱՄԱԿ ԽՈՅԻՑ

28 փետր. 95

Սալմաստի Ուլուէն աբեղան մի աչագին սվիտայով ժամանեց Խոյ։ Նորա այս արշաւանքին (այսպէս չգիտեմ ինչ անուն տամ) մասնակցում էին 2 Սալմաստեցի քահանաներ, Թեմակալ տեսուչ Աւետիսեանը և մի խումբ էլ ծառաների բազմութիւն։ Սա ինքն ըստինքեան մի չտեսնուած և անսովոր բան էր, որով տեղացիները զարմացած տառում էին որ ոչ մի եպիսկոպոս կամ վարդապետ այս բռնմթով (շքեղ) մեր քաղաքը չէր եկել։ Նորին սրժ. դեռ հանգիստ չառած՝ անմիջապէս եկեղեցի և յայտարարեց իրեն ով լինելը. մի քիչ քարոզելուց յետոյ, առանձին պարծենկոտութեամբ շեշտեց, որ այսուհետև ոչ միայն Սալմաստի փոխանորդն էր այլ նաև Խոյի և Ուրմիի, աւելացրեց թէ «շատ բան ունիմ ձեզ հետ խօսելու». զարմանում ենք, 3 օր մնաց այստեղ, բայց այդ շատ բաներից ըչ մեկը չասաց։ Ի դէպ է ասել, որ Նորին սրժ. իրան թոյլ տուեց մի նմանօրինակ ախրագործութիւն ևս Խոյումը կատարել, ինչ որ Հին-քաղաքումն է կատարել։ Ինքը անձամբ թակեց Վառ գիւղում ապրող մի գաղթական քահանայի իրան երկու ընկերների հետ միասին, որոնցից մէկը 70-ի մօտ Պօղոս անունով զառամեալ ծերունի էր։ Այդ չարաչուշակ դէպքից յետոյ խեղճ քահանան և իր ընկերները արիւն-արտասունք էին թափում։

Նորին-Սրժանապատուութիւնը կամենալով աւելի սարսափ ազդել միամիտ ժողովրդի վերայ և իր իշխանութիւնը ցոյց տալ ուզելով՝ մէկ անգամ Ս. Սարգիս եկեղեցու բակումը քահանայի միրուքից քաշքշում է, ապա չբաւականանալով դրանով, բերում է Մսի. Սարգարեանցի տունը և տեղւոյս հոգաբարձուների աչքի առաջ բաւականաչափ թակելուց յետոյ, հրամայում է ձգել անասունների գոմը։ Այս ազեղ վարմունքը հասարակութեան մէջ զզւանք է յարուցել. բոլորն էլ ատելութեամբ են խօսում և սալմաստցի Ֆարրուխի պէս ասում են, «խթի» է հա վարդապետ չէ։ Երանի սալմաստեցիներին, խոյեցիներին և Ուրմեցիներին, որ այսքան ուժեղ առաջնորդ ունին, այս մարդերի բաղդը բանել է որովհետև պարսիկներն անգամ այդքան զօրեղ դատաւոր կամ Ֆառաշբաշի չունեն։ Մենք էլ մեր կողմից աստուածներից աւելի ոյժ և բարբարոսութիւն ենք մաղթում Սրբէն աբեղային, որ այդպիսի քաջագործութիւններ նրանից անպակաս լինի։

Տօնօ

ՆԱՄԱԿ ԹԱՒՐԻԶԻՑ

27 փետր. 95

Ուրբաթ փետրվարի 24-ին, Դաւրէժում վախճանւեց վաճառական Մկրտիչ Յակովբեանը։ Առիթից օգտւելով յղում ենք մի քանի խօսք ասել։

Հանգուցեալ Մկրտիչ Յակովբեանը երկար տարիներ վարել է Լիլաւայի երկսեռ դպրոցների հոգաբարձուի պաշտօնը։ Պ.պ. Աբրահամ Մէլիք-Աբրահամեանի, Բաղդասար Մէլիք-Սարգսեանի և Թադէոս Աֆթանդիլեանի հետ հանգուցեալն էլ, աշխատել է Լիլաւայի դպրոցները խալիֆայական—Տէր-Թոդիկեան ճիրաններից հանելու և կանոնաւոր հիմքերի վրայ դնելու։ Եթէ չեմ սխալւում 1889—90 թւականին էր, որ կազմակերպւեցաւ Լիլաւա թաղի համար վերը յիշած հոգաբարձութիւնը։ Երբ նոր հոգաբարձութիւնը մտաւ իր պաշտօնավարութեան մէջ, դպրոցը ունէր 30 թուման պարտք, երկու ողորմելի խալֆա—ուսուցիչներ—Օրբելեաններ ու Անդրիասներ—և մի քանի համծեծ ու քիօթակի տակ սորկացած աշակերտներ։ Նոր հոգաբարձութեան գլխաւոր ջանքերից մէկն էլ այն եղաւ, որ դպրոցը ապահովէ մի դրամագլխով, որի տոկոսներով կարելի լինէր դպրոցի ծախսը ծածկել։ Այդ նպատակով, որքան մեզ յայտնի է, իւրաքանչիւր անդամ հոգաբարձութեան խմբից այլոց և հանգուցեալ Մ. Յակովբեանը 200-ական թուման միանուագ դրամ նուիրեցին դպրոցին՝ հիմնական դրամագլուխ կազմելու։ Հոգաբարձութեան ջանքերով՝ դպրոցի նիւթականը հասաւ մինչև 4 հազար թումանի, նախկին երկու խալիֆաների փոխարէն 9 ուսուցիչ, 250-ի չափ աշակերտներ ու աշակերտուհիներ և վերջապէս 1,500 թումանի չափ տարեկան բիւջէ սահմանւեցաւ, որ թէև ինքն ըստ ինքեան մի ողորմելի ռոճիկ է 9 ուսուցչի համար, բայց Լիլաւայի համար ահագին բան է։

Հանգուցեալ Մ. Յակովբեանը մինչև վերջին տարին էլ հոգաբարձու էր. թէև վերջին տարիներ չը գիտենք ինչ հանգամանքներից դրդուած, հեռացել էր, ինչպէս նաև միւս արժանաւոր ու գործունեայ հոգաբարձութեան անդամներն էլ զանազան հանգամանքներով հեռացան իրենց սիրած ասպարէզից՝ թողնելով քիչ թէ շատ ապահով դրութեամբ դպրոցը ուրիշներին....

Հանգուցեալ Յակովբեանի եղբայրը, նրա մահից յետոյ, 200 թուման է նուիրել մի քանի բարեգործական հաստատութիւնների, 100 թուման Լիլաւայի դպրոցներին, որից 50 թումանը իրեն համար Լիլաւայի ս. Սարգիս եկեղեցու գաւթում թաղւելու համար, որը դարձեալ դպրոցինն է։ 50 թուման Դաւրէժի Հայուհեաց ընկերութեան, 50 թուման էլ Թառոնի սովեալներին։

Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Դաւրէժից ստացանք հետևեալ հեռագիրը։ Սալմաստի գործերին ծանօթ շրջաններում «Շաւիղի» չորրորդ համարի Փէլիետոնն հետաքրքրութեամբ և համակրութեամբ է կարդացվում, ստորագրութիւններն նամակով։

Մի խումբ համակրողներ

—

Արտասահմանից մեր թերթին բաժանորդ գրուել կամեցողներին յայտարարում ենք, որ երբ փողը փոստ են ձգում, փոստի անդորրագիրը պէտք է հասարակ նամակով մեզ ուղարկեն և իրենց հասցէն էլ գրեն, որովհետև դրամական ծրարները շատ ուշ են հասնում մեզ և դրանով բաժանորդները աւելի ուշ կը ստանան թերթերը։ Օրինակ անցեալ 94 դեկտեմբերից ճանապարհ ձգած դրամը Ղզլարից միայն այսօր ստացանք. եթէ թերթերը վաղը ճանապարհ ձգենք, ուրեմն այդ բաժանորդը պիտի թերթ ստանայ միայն Ապրիլի մէջ։ Յիշեցնում ենք նաև որ Ռուսաստանից դրամական ծրարների հասցէն պիտի լինի ոչ թէ միայն черезъ Баку, այլ черезъ Баку въ Энзели ևայլն։

—

Յաճախ է պատահում, որ մեզ յօդւած գրողները նամակներ են տեղում խմբագրատուն, պահանջելով որ մենք նրանց առանձնապէս պատասխանէինք իրենց յօդւածի տպւելու կամ չը տպւելու մասին։ Այդպէսներին յայտարարում ենք որ 1) 3 թերթից պակաս գրւածքները չեն վերադարձնւիլ։ 2) Յօդւածների համար պիտի սպասել 6 ամիս, որից յետոյ հարց տալ, եթէ յօդւածը մեծ է. իսկ եթէ փոքր է խմբագրութիւնը առանձնապէս չի պատասխանի. եթէ տպւելու է կը տպւի։ 3) Այն յօդւածները որոնց տակը ամեն անգամ գրողի իսկական անունը կեղծի հետ չէ ստորագրած, կը մնան առանց տպագրութեան, եթէ միայն խմբագրութեան մշտական թղթակիցը չէ։ 4) Յօդւածը չ'ուղարկած պայմաններ առաջարկելը, ինչ պայման որ լինի—անընդունելի կը մնայ։ 5) եթէ յօդւածը մաքուր կերպով և գունաւոր թանաքով (որովհետև յաճախ գրում են դժգոյնով) գրւած չը լինի—չի տպագրւիլ։

—

Կրկին անգամ յայտնում ենք, որ հաշիւներ, նւիրատւութեան ցուցակներ ևայլն միմիայն երբ յայտարարութիւն կարող ենք տպել և երբէք բացատրութիւն չի լինել։

—

Որպէս հաղորդում է «Տարազը», Կովկասի թեմական առաջնորդների փոփոխութիւններ են եղել այսպէս. Ղարաբաղի թեմի նախկին առաջնորդը պաշտօնանկ լինելով, նրա տեղ նշանակւած է Գարեգին Սաթունեան եպիսկոպոսը։ Խորէն Ստեփանէն՝ Աստրախանի առաջնորդ։ Անանիա եպիսկոպոսը՝ Երևանի թեմի կառավարիչ։ Իսկ Կիւրեղ եպիսկոպոսը՝ Բեսարաբիայի ժամանակաւոր կառավարիչ։

—

Այվազեան վարդապետը իր հետն է բերել Թէհրանի հայ ժողովուրդը հովւելու համար մի քահանայ, որ առաջ Ընթերցասիրաց ընկ. ընթերցարանի ծառան էր։ Հայր սուրբը անցեալ կիւրակի, խօստովանելով այդ, գտաւ որ նոր քահանան ունի մի առաւելութիւն՝ այն է որ գիտէ երգել և լաւ ձայն ունի։ Վատ չէ այդ կրիտերիումը, քահանայութեան արժանանալու համար։

—

Իբր մի փոքրիկ պատասխան մեր կողմից Սպահանի հայերին, որոնք իրենց բողոքը վ. Այվազեանի և Եսայի եպիսկոպոսի դէմ արտայայտել են այս համարում տպւած նամակով, յայտնում ենք, որ Այվազեան վարդապետը (ըստ իւր կոնդակի, տուած Եսայի եպիսկոպոսից) Թէհրան նստելով, իւր աչը պիտի տարածի նաև Սպահանի և նրա շրջակայ հայաբնակ գաւառների գործերի վրայ։ Բացատրութեան շատ կարօտ է երկու հայ կրօնաւորների այդ կարգադրութիւնը, որ կատարւել է առանց հոգևոր բարձր իշխանութեան հրամանին։ Իսկ մեր կարծիքը մենք կը յայտնենք մի աւելի յարմար առիթով, որովհետև Եսայի եպիսկոպոսի պատճառները վերին աստիճանի թոյլ են, արդարացնելու համար իրենց արած կարգադրութիւնը։

—

Վանաք գիւղի ուսուցչին թէ դպրոցի հոգաբարձութիւնը և թէ գիւղի քահանան այնքան զզւեցրին, որ ուսուցիչը տարւայ կէսին, գրեթէ հիւանդ, թողեց հեռացաւ ո՛չ միայն դպրոցից, այլ և Թէհրանից։ Արդեօք չե՞ն ամաչում դպրոցական գործերը այդպէս խաղալիք դարձնող անձերը իրենց ապիկարութեան արդիւնքներից։

—

«Արձագանք» № 22-ում, Թէհրանի Հայ Երաժշտական խումբը, իւր փառաւոր մանկավարժ—ներկայացուցչի բերնով ոգևորւած, գովասանք է կարդում «ազգային գործերի նահատակ», մինչև իսկ «ամենաազնիւ վարքով» և մանաւանդ «ամեն տեսակ բարեգործական ընկերութեանց մէջ աթոռ ունեցող», այլ և «անքննելի անկեղծութեան տէր» ևայլն ևայլն, ազգային մեծ գործիչ Վահան Մեսրովբեանին։ Կամենալով նրա փառքը աւելի բարձրացնել՝ նա աշխատում է ցեխ շպրտել «Շաւիղի» խմբագրութեան վրայ,_ որի բնակւած տան միջից մի օր դուրս է եկել մի 15-ամեայ պարսիկ պատանի և ծեծել է հաստափոր և հաստավիզ «ազգային գործչին» (!!) Այդ դէպքը, որ այժմ դատարանում քննվում է, մենք անշուշտ կը նկարագրենք ապագայում որովհետև դրանով պ. Վահան և ընկ. «ազգասիրական» շատ գործողութիւններն պիտի պարզւին։ Առ այժմ շնորհաւորում ենք Վահան Մեսրովբեանին որ հասել է «Արձագանքի» միջոցաւ իրեն արած ապօֆէօզին։ Ափսոս պարոնը չը գիտէ որ «Արձագանքից» գովեստ ստանալը նշանակում է լիովին անպատիւ լինել։ Վահան Մեսրովբեանին մեր կողմից էլ գովելու համար, խնդրեցինք մեր Փէլիետոնիստին և ահա, նա «պատիւս արժանաւորաց, յարգս....» է անում ըստ կարգին և ըստ արժանւոյն։ Յոյս ու-

նինք որ ազգային «մեծ գործիչը» գոհ կը մնայ մեզնից էլ:

—

«Տարազը» հաստատում է այն լուրը, որ Նախեան վարդապետը հաստատուել է որպէս Սինօդի անդամ: Երանի՜ այսուհետեւ հայ ազգին:

—

Կովկասի թերթերից յայտնում են որ հրատարակուած է օրէնք, որով 1895 թ. սկսած դրամական հարկ է առնելու մահմետական ազգաբնակութիւնից զին- ւորական ծառայութեան փոխարէն:

—

Ստացանք Կալկաթայում հրատարակուող «Ara» ամսագրի № 1 և 2-ը: Ամսագիրը մի քանի ամիս լռութիւնից յետոյ, վերսկսվում է կանոնաւորապէս հրատարակուել և բովանդակում է բաւական հետաքրքրական յօդուածներ: Վերջին համարում նա համակրութեամբ է խօսում «Շաւիղի» մասին և նրա անցեալ տարուայ № 46-ի առաջնորդողից թարգմանաբար արտատպել է մի կտոր:

—

Լոյս է տեսել և մեզ հասել «Հորիզոն» անունով գրական հանդէսի առաջին գիրքը, որ առանձին ծախվում է 1 րուբլիով: Հանդէսը լոյս է տեսել Թիֆլիզում և Փ. Վարդազարեանի հրատարակութեամբ: Բովանդակութեան մասին կը խօսենք եկող անգամ, իսկ գնի և հասցէի մասին կը լինի մեր յայտարարութեան բաժնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՍՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Թողնելով մի ուրիշ անգամի եւրոպական թերթերում արծարծուող մի քանի կարեւոր հարցերի մասին խօսելը, համառօտ ակնարկ ձգենք առ այժմ հայ թերթերի վրայ: Ի հարկէ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլոր հայ թերթերը զբաղուած լինէին հայերի ընդհանրական կեանքին վերաբերող հարցովը: Մենք թողնում ենք նրանց մասին կարդալ եւրոպական թերթերում, որոնցից արտատըպում են հայ թերթերը: «Մշակում» այս անգամ կայ աչքի խփող մի առաջնորդող որ շատ սազ է գալիս պարսկահայերի կեանքին էլ, «բարեգործներ առանց բարեգործութեան» վերնագրով յօդուածն է: Յօդուածը ակնարկում է վաղուց-ի վեր հայ չորրորդ թերթերի յիշատակած բազմաթիւ բարեգործները, որոնք «ուրիշի աշխատանքով հարստացած հարստահարում են հասարակական զգացմունքները, վայելում են բարեգործ անունը»... և այն էլ մի քանի կոպէկ տալով մի որեւիցէ ուսումնարանի և սկզբից չորրորդ թերթերի մէջ հնչեցնել տալով իրենց բարեգործութիւնները:

Այդ «բարեգործ» քահանաներից մէկն էր նաև Կովկասի Գրակալի կոչւող կայարանում հայոց կաթուղիկոսից օրհնութիւն և վարձատրութեան խոստում ստացողը. նա, որ առանց իր գիւղից դուրս գալու՝ 30000-անոց մի եկեղեցի է կառուցել իր փողով գիւղում և մի այդքան էլ հարստութիւն ունի դիզած:

Այդպիսի բարեգործներ այնքան վխտում են հայերի մէջ և բարեգործութեան անունը այժմ այնքան միայն սեփհական է դարձել վաշխառուների և խաբեբայ թող փչողների, որ «երեկ բարեգործ անունը ներշնչում էր պատկառանք, բարի նախանձ, իսկ այսօր՝ միմիայն արհամարհանք և հեգնական ժպիտ»: Եւ իրաւ, ինչ է նշանակում այդ ածականը տալ այնպիսի անձերի, որոնք հազարներով թշւառ ժողովրդից պոկելուց, ամեն տեսակ սուտ, անազնիւ ճանապարհներով հասարակութիւնը կողոպտելուց յետոյ, իրենց գողութիւնը թագցնում են՝ մի փոքրիկ գումար այս կամ այն—յաճախ ապիկարներ սնուցանող—հաստատութիւնների տալով: Չը գիտեմ որտեղ կարդացել եմ Ալ. Փանոսեանի մի բանաստեղծութիւնը, որի բովանդակութիւնը այսպէս է: Մի բու—երբ գիշերները թռչունները թառած ծառերի վրայ՝ ննջում էին—գնում էր և խեղդոտում նրանց, սպանում ու որսում և առատ պաշար ժողոված՝ իր բունը վերադառնում. վերադառնալիս՝ նա չէր մոռանում մի քանի կտոր ցած ձգել, որ կատուներն ու շներն ուտէին և սսէին «Օ՛հ, ինչ գթասիրտ է, բարեգործ է բուն, աշխարքը նրա պէս առատաձեռն ու բարեպաշտ հոգի չէ տեսել»...

Արդեօք որքա՜ն առատ են հայերի և մանաւանդ մեր մէջ այդպիսի «գթասիրտ և բարեգործ» բուերը, որոնց է ուղղուած № 21 «Մշակի» առաջնորդողը....

*** Թիֆլիզում մեռել է, հայ կրօնաւորութեան մէջ երբեմն միայն նմանը ունեցող իբր աննորմալ տիպ— մի վարդապետ՝ Լեւոն Խոջայեան անունով: Կուզէինք որ «Ձաւիղի» ընթերցողը երկար խորհրդածէր նրա մասին «Մշակում» գրուած յօդուածի մի կտորի վրայ, որը հետեւեալն է:

«Ի՞նչ էր սպասում նա և ինչ դուրս եկաւ. նա ուզում էր գործել. նա երեւակայում էր, թէ «հայր սուրբ» անունը և կրօնաւորի հագուստը կը բանան նրա առաջ բոլոր ճանապարհները, կը հարթեն բոլոր խոչընդոտները......... և ահա հեռու, Թիֆլիսի մի ետ ընկած սենեակում, առանց օգնութեան, առանց միջոցների, հիասթափված, մեռաւ հեգնական ժպիտը երեսին»...

«Վեհափառ Կաթուղիկոսը—շարունակում է յօդուածը—ուղարկել էր 50 րուբլի» (որքան շատ իսկապէս)...

«Հայոց խղճուկ, աղքատ, արժանոր մարդկանց կարօտ հոգեւորականութեան շրջանում մի քանի մարդիկ կային—և դրանցից մէկն էլ պակասեց»:

Դրանով վերջանում է յօդուածը, բայց շատ խորհրդածութիւններ առաջացնելով: Իսկապէս ինչ է ցոյց տալիս մեզ Խօջայեան վարդապետի հիասթափութիւնը.-- այն, որ նա չը նայելով իր համալսարանական ուսմանը, չէր կարողացել հասկանալ այն բանում որ ինքը անընդունակ էր ներկայանում ստեղծել մի դասակարգից այնպիսի արդիւնք, որ կարող էր դասակարգի գոյութեանը լիովին վնասել: Ի՞նչ էր կամենում նա. կամենում էր ապացուցանել որ հայ կղերականութիւնը եթէ ունենայ զարգացած անդամներ պիտի կարողանայ օգտակար լինել: Չէ՞ որ դրա համար հարկաւոր է մի անգամով, կախարդական յանկարծականութեամբ միայն փոփոխութիւն առաջացնել. ապա թէ ոչ, դարերից ի վեր ամուր հիմքերի վրայ նստող դասակարգական շահերի մէջ՝ նա պիտի ստիպուէր կամ յարմարել և ինքն էլ միանալ ու գործել յօգուտ նրանց և կամ ոչնչանալ այնպէս—որպէս էլ եղաւ: Պարզենք մի օրինակով: Կան մտքեր, որոնք առընչական են, օրինակ. հայր և որդի. մէկը եթէ հայր է, ուրեմն որդի պիտի ունենայ (մեռած կամ կենդանի), եթէ որդի է, հայր պիտի ունեցած լինի. եթէ մէկը վաճառական է, ուրեմն պիտի շահով ապրանք ծախի, այլապէս վաճառական կոչւիլ չէ կարող. մի խօսքով, ուր պատճառը կայ արդիւնքը անխուսափելի է. ուրեմն եթէ մի Խօջայեան, կամենար մտնել վաճառականների մէջ և վաճառական լինել որպէս զի վերացնի շահով ապրանք ծախելը, չէ՞ որ դա անհասկանալի բան կը լինէր.-չէ՞ որ նրան չէր յաջողւիլ, քանի որ վաճառականը գոյութիւն ունի միմիայն շահով ապրանք ծախելով, այլապէս նա վաճառական չը պիտի լինի: Արդ, կամենալ կղերականութեան հետ առնչականապէս կապւած յատկութիւնները վերացնել դառնալով կղերի իրեն անդամ—անհասկանալի է և ի զուր ջանք. մի անգամ կրօնաւոր դարձար դու, ինքդ սկզբումը դժուարութեամբ լինի (եթէ լաւ մտքեր իսկ ունիս)—հետզհետէ աւելի դիւրութեամբ, կանես այն բոլորը ինչ որ քո դասակարգիդ պատկանողները անում են: Հակառակը եթէ գործես—մի ամբողջ կազմակերպութիւն ունիս քո դէմ, որ քեզ կը փոշիացնի, ձեռներդ կը կաշկանդի և միեւնոյնն է թէ քո նպատակներդ ծուխ կը դարձնի: Քիչե՞րն են երազել, քիչե՞րն են խոստացել կազմել, բայց հէնց որ մտել են դասակարգի մէջ, կամ ոչնչացել են և կամ դարձել «աւելի պապական քան ինքը պապը»:

Իսկ Խօջայեանի պէս իդեալիստները, աննորմալ տիպերը, մեռնելով հիասթափւած, աւելի քան երբէք, հաստատում են որ, «ոչ կարէ ծառ չար պտուղ բարի առնել...»: Լ. Փ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Գահիրէ. 19 մարտ. (Ն. Տ.) Սէլեգին բէյը առողջ հասել է այստեղ: Նա գաղափար է յայտնել որ դարվիշները չեն փորձել յարձակում գործելու Քասօլայի վրայ, միայն կը բաւականանան խալացւոց արգելելու դէպի հիւսիս-արեւմուտք առաջանալու:

Եօկահամա. 19 մարտ. Չինական խաղաղութեան լիազօր դեսպանները հասան Սիմոնոսակի:

Լոնդոն. 19 մարտ. Անգլիայի ներկայացուցիչը մի ուլտիմատում է ներկայացրել Նիկարագուայի կառավարութեան 15000 ֆունտ ստերլինգի վնաս և նշանակելու մի յանձնախումբ որ որոշէր անգլիական հպատակների վնասը, որ կրել են նրանք Մօսկիտոսի եկերքեյը արտաքսելով: Եօթ շաբաթ ժամանակ է որոշուած այդ պահանջները լրացնելու համար, սկսած փետր. 25-ից: Սպանական «Րէյնա րէջէնտայի» մնացորդը գտնուել է Տրաֆալգարպէյի ծոցում. ոչ մի կենդանի անձ չէ մնացել. հաստատ է այժմ որ նաւի վրայ բոլոր եղողները խեղդւել են: Նաւաբեկութեան պատճառը յայտնի չէ:

Եօկահամա. 20 մարտ. Լիհունգ Չանկ փոխարքան Ճապօնիայում ընդունւել է իրեն արժանավայել պատիւներով և ցոյցերով:

Լոնդոն. 20 մարտ: Համայնքների ժողովում, երեկ, Կիպրոսը անգլիական ադմինիստրացիայի տակ պահելու հարցը նորոգւեց: Ֆինանսների մինիստրը պատասխանելով մի քանի հարցերին մերժեց անգլիական ժողովրդին բեռնաւորել այդ կղզին բոլորովին գնելու մի մի նոր փոխառութեամբ:

Լոնդոն. 21 մարտ. «Թիւրքիստան» թերթը հրատարակում է յօդւածներ, որոնք ասում են, որ Ռուսիայի Պամիրում արած կոնսեսիոնները արտայայտում են նրա խաղաղական միտումները: Բ. Դուռը ստիպւելով այն տէրութիւնների ճնշումից, որոնք հետաքրքրվում են հայկական հարցով, համաձայնւեց մի հայ թարգման ուղարկելու որ օգնի հայկական հարցի համար կազմւած յանձնախումբի մէջ եղող օտար դելեգատներին: Այստեղ հասած լուրերը հաղորդւում են որ ճապոնեան պաշարել է Թամզիայի նաւահանգիստը որ գտնւում է Ֆօրմօզայի հիւսիսային կողմում:

Եօկահամա 21 մարտ. խաղաղութեան դաշինքը վերջացնելու համար Սիմոնոսակիում բանակցութիւնները սկսել են:

Բերլին. 24 մարտ. Րէյխստագը երեկ 17 ձայնի առաւելութեամբ և գրգռւած վիճաբանութիւնից յետոյ, որոշեց չը շնորհաւորել Բիսմարկին նրա 80-րդ տարեդարձի առթիւ: Հակառակողների մեծամասնութիւնը րադիկալ — սոցիալիստներն էին և այդ թշնամական ցոյցի համար րէյխստագի նախագահն ու փոխ նախագահը յայտնել են իրենց հրաժարւելու մտադրութիւնը: Կայսր Վիլհելմը հեռագիր ուղարկեց Բիսմարկին յայտնելով իր խորին բարկութիւնը այդ քուէարկութեան դէմ, որ կատարելապէս հակառակ էր իւրաքանչիւր գեր մանացու զգացմունքի: Մեծ պատրաստութիւններ են տեսնվում ամբողջ Գերմանիայում, Բիսմարկի ծննդեան տարեդարձը կատարելու համար: Ֆրանսական զինւորական ատեանը որ կազմըւեց Մադագասկարում, 20 տարուայ բանտարկութեան դատապարտեց Վօքըր անունով մի անձի, որը նախկին Ամերիկական կոնսուլ էր. Վօքըր թղթակցում է եղել Հովասի հետ:—Ճապոնացիք կրկին փորձեցին ցամաք ելնել և կրկին ետ մղւեցին.

Եօկահամա. 24 մարտ. Սիմոնօսակիից այստեղ հասած լուրերը հաստատում են որ փոխարքայ Լեհունգ—Չանկը երբ վերադառնում էր իր բնակարանը խաղաղութեան պայմանները լսելուց յետոյ՝ ատրճանակի մի հարւած ստացաւ երեսին. գնդակը արձակող երիտասարդ ճապոնացին ձերբակալւեց. այդ նախատինքը մեծ յուզում պատճառեց:

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Սալմաստ (Փայաջուկ) Յ. Մ. Գուլօեան (եթէ միայն դուք էք ստորագրել մեզ ուղարկած թղթի վրայ): «Ձաւիղ» № 4-ի Ֆէլիետոնի ճշմարտութիւնները ձեզ դիւր չեն եկել. երևի դուք կամ ձեզ գրել գրդողը այն ենիչերական հայ խմբին էք պատկանում որ աւերում է Սալմաստը: Եթէ չէք կամենում թերթը ստանալ (պահանջողը դուք էք եղել) դիմեցէք մեր գործակալին եւ ետ ստացէք ձեր փողը:

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ